

## 2.

Անգամ մը լեռներուն վրայ իր ցանկաստանի, անիկա պիտի իմաստանար Մողոմոնէն ալ կատարեալ իմաստութեամբ, որուն գրիչը կիներուն միտին մագաղաթը ունեցաւ ու մելանի փոխան արիւն չծծուց իր եղէգին՝ ինչպէս էր ճակատագիրը արեւմտահայ գրողներուն գրեթէ մեծ մասին, որոնց շեշտին կրակը, վառ համը այդ կարմիր հեղուկին անցած կը թուի ինծի հիմա, երբ կը ջանամ հասկնալ զանոնք, իրենց քիչիկ բառերուն ընդմէջէն այնքան սրտայոյզ, ջերմին ու սիրագին:

Մաթիկ Մելիքիանեանց, մեր բոլորին պէս ճանչցաւ թուրքը, բզկտող կենդանի, մորթող երկոտանի, մռայլ, մռայլ, մռայլ իբր հոգի, իբր զգայնութիւն: Ու անասնութիւնը, որուն սպասարկէր միտքի նախնական դրութիւն մը, այնքան մօտիկէն թելադրող տափաստանը: Առանձին ուսումնասիրութիւն է այս հոգեվիճակին տիրական տարանջատումը: Ինչ որ այս դարուն սկիզբը թուրքն էր, Օսմանին կայսրութեան սահմաններէն ներս, դեռ չէ գտած իր պատկերը հաւատարմօրէն ինկած կտաւի: Մաթիկ Մելիքիանեանց, շատ երիտասարդ, ատիկա ընելու անկարող, հաւաքած էր տարրեր միայն: Քառասուն տարի ետքը իր նահատակութենէն, երբ կը յորինեմ իր կենսագիրը,